չապ արձաններն այնքան ինձ հետաքրքրեցին, որ 1906ին գնացի Գեղարդ, բարձրացայ Գառնիի (Ազատաուակի) բարձունքը, Սեւանի լճի հարաւային լեռնաշղթայի լանջերում գտայ ճահիճների եւ աւազուտների մէջ գլորուած 30ից աւելի վիշապական արձաններ, աւելի ճոխ, գեղեցիկ քանդակներով, որով արդէն համոզուեցի, որ սրանք վիշապաղանց շրջանից մնացած յիշատակարաններ են, որոնք երկրագործ դասի պաշտամունքն էին կազմում, որտեղից սկսում էին դաշտերն ու հովիտները ոռոգող առուակներն ու ջրանցքները: Այս արձանների վրայ գտնուած սլաքները այնքան համանման էին Գեղարդի ապառաժային վանքի վրայ գտնուած սլաքներին, որ տարակոյս չկայ, թէ սրանք ինչ որ կապ են ունեցել հեթանոսական դարաշրջանում:

Բաշգառնիից, Գեղարդից անցնելով՝ երբ Բայբուրդի եայլան տեսայ, իսկոյն յիշեցի Ճորոխի Բայբուրդը, զգացի թէ անշուշտ կապ կայ սրանց մէջ: Այստեղից տեսանելի է Իմիրշիկը եւ Կալայշին, որի անունը ինձ ծանօթ էր Արագածի լանջին գտնուած Կալայշի եւ Հոռոմի բերդի Կալայշի անուններից որով պարզուեց, որ Կալայշին էլ այդ հին յիշատակարաններից մէկն է: Արխաշէն[1] (Արքայաշէն) լեռների

---

[1] Արխաշէն, Ախաշէն, Արքունիս, Արինիս գեղա-